



## Վ. ԿՈՒՊՐԵՎԻԶ

Բելոռուսական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ.  
ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ

Կյանք տիեզերքում... Թիշ նիվակներ չեն փշոն գիտնականներն այն վեճերում, որոնք շարունակվում են արդեն մի քանի տասնամյակ: Նրանցից ունանք իրենց երևակայության ուժով արեգակնային համակարգության մեր հարևաններ Վեներան և Մարսը բնակեցրել են զարմանահրաշ կենդանիներով ու բույսերով, մյուսները մոլեգնորեն ապացուցում էին, որ անհնար է կյանքը երկրային մթնոլորտից դուրս: Բանավեճը հասավ իր գագաթնակետին, եթե տիեզերք սլացան Երկրի առաջին արիստական արքանակներն ու միջմոլորակային ավտոմատ կայանները:

Տիեզերական տարածության մեջ կյանքի հնարավորության մասին ինքնատիպ, կարելի է սաեւ, նույնիսկ ֆանտաստիկ, տեսակետներ ունի Սովետական հայտնի գիտնական, ակադեմիկոս Վասիլի Ֆեոֆիլովիչ Կուպրիկչյո: Նրա նետելությունները կառուցված են ոչ միայն կառումների ու ենթադրությունների, այլև նետազոտողների կողմից արդեն ստացված իրական փաստերի վրա:

Սոորեւ տպագրում ենք ժուռանակստ Վ. Գուբարյովի վրուցք ԲԱՍԴ Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ Վ. Կուպրիկչյի հետ:

**Ա**մենից առաջ պետք է սկըզբունքորեն որոշել՝ հնարավո՞ր է արդյոք կյանքը մեր երկրի սահմաններից գուրս: Առայժմ մեր տրամադրության տակ եղած փաստերն իրավունք են վերապահում դրական պատասխան տալ այս հարցին: Այդ փաստերը մեզ տալիս են տիեզերական հանապահողները՝ մետեորիտները: Նրանց բաղադրության մեջ հայտնաբերվել են միկրոօրգանիզմներ, ինչ-

պես նաև շատ բարձր բարդության քիմիական նյութեր: Մետեորիտները երկիր են գալիս տիեզերական տարածություններից, հետևաբար, տիեզերքի խորքերից նրանք մեզ «տեղեկություններ են բերում» կենդանի մատերիայի մասին: Մենք չգիտենք, թե ինչպես են առաջացել մետեորիտները և ինչ ուղիներով են ընկել երկիր, բայց նրանց մեջ կան կյանքի ակրն-հայտ նշաններ: Եվ գլխավորն այդ է:

Ուստի անկասկած է, որ երկրի սահմաններից դուրս կյանք գոյություն ունի:

Ես ուզում եմ ձեր ուշադրությունը հրավիրել նաև այն բանի վրա, որ երկրաշխն է ակները ընդունակ են դիմանալու արտակարգ ցածր ջերմաստիճաններին: Վերջին ժամանակներս ՍՍԾՄ Գիտությունների ակադեմիայի որոշ ինստիտուտներում և այլ հաստատություններում կատարվել են հետաքրքիր հետազոտություններ. կենդանի օրգանիզմները ենթարկվել են վակուումի և խիստ ցածր ջերմաստիճանների ազդեցությանը: Այդ փորձերը ցույց են տվել, որ մեր պատկերացումով այդքան անբարենպաստ նիրգործություններից հետո շատ օրգանիզմներ կենդանի են մնացել: Խսկ միքանի օրգանիզմների համար ընդհանրապես չեն գտնվել բացասական ջերմաստիճաններ, որ ընդունակ լինեին սպանելու նրանց: Ակամա հարց է ժագում. ի՞նչ է դա՝ պատահականություն, թե՝ հարմարվողականություն՝ եթե կարելի է այսպես ասել, «աստրոպուիտ» գոյության նկատմամբ, երբ օրգանիզմները պոտենցիալ հնարավորություն ունեն թողնելու իրենց մոլորակը և քոշելու մեկ այլ մոլորակ: Հավանաբար դա հարմարվողականություն է:

Կա մի հանգամանք ևս, որը պետք է հիշել, եթե խոսքը զնում է տիեզերքում կյանքի գոյության մասին: Բանն այն է, որ որոշ առնշությամբ կենդանի նյութի էվոլյուցիան մեր մոլորակի վրա ավարտվել է մոտավորապես երեսու միլիարդ տարի առաջ: Ես նկատի ունեմ կենդանի նյութի բիոքիմիական հիմնական պրոցեսները: Ինչպես ցույց են տվել ամենանորագույն հետազոտությունները, որոշ ամինաթթուներ, մասնավորապես ասպարագինաթթուն, ու

զլուտոամինաթթուն, զլիցինապրոլինը, վալինը և որոշ այլ նյութեր, արտակարգ կայում են: Դրանք կարող են առանց որևէ էական փոփոխություն կրելու պահանջմել 20—30° միլիոն տարի: Նույնիսկ բրածո խխունջը, որը մանրակրկիտ հետազոտությունների է ենթարկվել ԱՄԵ-ի լաբորատորիաներում, օժտված է իր մկաններում միունագեղղինտրիֆուֆատային սիստեմով, այսինքն այն նույն սիստեմով, որից օգտվում ենք մենք: Այսպիսով, 25 միլիոն տարի առաջ խխունջը իր ակտիվ կյանքի համար էներգիա էր հայթայթում այն նույն ճանապարհով, ինչ և այժմ: Մեկ այլ օրինակ ևս հնէաբանական տվյալները մատնանշում են, որ ֆոտոսինթեզող օրգանիզմները երկրի վրա եղել և ակտիվորեն գործել են մոտ 1,5—2 միլիարդ տարի առաջ: Կյանքի ծագման և նախնակարյան օրգանիզմների ձևավորման ամենավաղ արշալույսին ֆոտոսինթեզի պրոցեսը արդեն գոյություն ուներ գրեթե այժմյան ձևով: Նախնական էակների «բլորավլաստները» այն նույն ձևով էին արենի ճառագայթի էներգիան վերափոխում օրգանական միացությունների էներգիայի, ինչպես այդ հիմա էլ հաջողությամբ կատարում են ձեր պատուհանի տակ ժաղկողությունը:

Իղոտոպային շափումների օգնությամբ գիտնականները պարզել են, որ ֆոտոսինթեզի և սուլֆատները վերականգնելու ընդունակ օրգանիզմները գոյություն են ունեցել մոտ երկու միլիարդ տարի առաջ: Ինչի՞ մասին է այդ խոսում: Նախ այն մասին, որ բիոքիմիական պրոցեսների և նյութափոխանակության էվոլյուցիան հիմնականում ավարտվել է շատ վաղուց, և միմիայն ձևագոյացման պրոցեսն է շարունակել իր զարգացումը: Էվո-

լուսցիան ընթացել է նյարդային համակարգության կատարելագործման ուղղով և, հավանաբար, ամեններն էլ չեն ավարտվել: Այդ կապակցությամբ նյարդարշջի գործունեությանը առընչվող բիոբիմիական պրոցեսները, հավանորնն, դեռ էվոլյուցիա կապրեն, հնտագայում ևս կատարելագործվելով:

Որպեսզի կենդանի նյութի մեջ տեղի ունենան նուրբ և չափազանց բարդ բիոբիմիական պրոցեսներ այն մակարդակով, ինչ տեղի է ունենում այժմ, անհրաժեշտ է արտակարգ տեսական ժամանակաշրջան: Եթե ընդունենք, որ երկրը գոյություն ունի 4—5 միլիարդ տարի, ապա այդ ժամանակը ակնհայտորեն անբավարար է մի շարք կարևորագույն բիոբիմիական պրոցեսների էվոլյուցիայի ավարտի համար այն ժամանակարնիթացքում, որ ներկա ժամանակաշրջանից ետք է մնում երկու միլիարդ տարով: Չէ որ այդ ժամանակի մի մասն ընկնում է այն ժամանակաշրջանին, երբ բարձր շերմաստիճանների պատճառով կյանքը երկրի վրա հնարավոր չէր:

Այստեղից կարելի է հանդել այն լզրակացությանը, որ կյանքը տիեզերքում գոյություն ունի ամենուրեք, իսկ կենդանի նյութը հարմարվել է ցածր և գերցածք ջերմաստիճաններին: Իսկ դա նշանակում է՝ տիեզերական տարածություններում, հնարավոր է, որ կան «կենդանի ճանապարհորդներ», կյանքի «անտուն» ներկայացուցիչներ: Դրանք սպորներ են կամ այլ ձևեր, կենդանական սաղմեր, որոնք դեպերելով տիեզերական տարածությունում, բարեպատեհ հնարավորության են սպասում այս կամ այն մոլորակում բնակություն հաստատելու համար:

Ուստի կասկած է առաջանում. Երկրի վրա կյանքի առաջացման ամենա-

վաղ ժամանակներում արդյոք տիեզերական տարածություններից չե՞ն քըշվել-բերվել բիոբիմիական էվոլյուցիայի արդեն երկարատև ուղի անցած կենդանի մատերիայի որոշ «արիմիտիվ» ձևեր:

Ակներսորն մետեորիտներում կամ տիեզերական տարածության այլ սուբստրատում<sup>\*</sup> կյանքի առկայությունը պարտական է կյանքի մատերիալի՝ մեզ համար առաջման դժվար ըմբռնելի, անսուլոր հատկություններին:

Այժմ մի քանի խոսք կյանքի այլ ձևերի մասին, որոնք հիմնված են ոչ թե ածխածնի, ինչպես երկրում, այլ ուրիշ էլեմենտների վրա:

Սկզբունքորեն, ինձ թվում է, մենք չենք կարող ժխտել այլ էլեմենտների վրա հիմնված կյանքի գոյության հնարավորությունը: Այդ էլեմենտներից առավել հարմարը սիլիցիումն է: Այն լայնորեն տարածված է բնության մեջ, բայց մեր երկրային պայմաններում անընդունելի է եղել կենդանի էակների ստեղծման համար: Իսկ այլ պայմաններում սիլիցիումը կարող է միանգամայն համապատասխան հիմք լինել կյանքի շենքի համար: Սակայն, ես կարծում եմ, «սիլիցիումային» բանական և ոչ բանական էակներ արեգակնային համակարգությունում էլ չկան: Դա այլ աշխարհների բան է:

**Ի**նչ կարելի է ասել կյանքի առկայության մասին լուսնի վրա: Սույն կերպով հաստատված է, որ լուսնի մակերեսը ծածկված է արտակարգ նվազ ջերմահաղորդիչ նյութով: Հնտեսաբար, լուսինը շատ խնայողաբար է ծախսում ներքին ջերմությունը: Այն տպավորությունն է ստացվում, որ լուսնի «մարմինը» տիեզերքից պաշտպանող այդ տաք վերմակի տակ կյանքը

\* Սննդառու միջավայր միկրոօրգանիզմների դարդացման համար:

կարող է ոչ միայն պահպանվել, այլև  
մակերեսից որոշ խորության վրա ակ-  
տիվորեն զարգանալ: Դեռ ավելին,  
այդ պայմաններում ինչ-որ կենդանի  
էակներ նույնիսկ ընդունակ են էվո-  
լյուցիա ապրել: Թե զարգացման որ  
աստիճանին է հասել էվոլյուցիան,  
դժվար է ասել: Բայց, քանի որ մի  
քանի մետր խորության վրա ջերմաս-  
տիճանը ոչ միայն կայուն է, այլև,  
հնարավոր է, որ մոտ է պլյուսայի-  
նին, ապա էվոլյուցիան միանգամայն  
հնարավոր է: Սակայն համեմատաբար  
ցածր ջերմաստիճանն էլ չի արգելա-  
կում կյանքի զարգացմանը: Բավական  
է հիշել լեռնային Անտարկտիդայի  
պայմանները, որն ամեննին էլ զուրկ  
չէ կյանքից:

Կյանքի ծնունդը անքակտելիորեն  
կապված է չրի հետ: Ուստի հարց է  
ծագում. կա՞ արդյոք չուր կուսնի  
վրա:

Մոլորակների գոյության սկզբնա-  
կան ժամանակաշրջանում նյութի հալ-  
ման պրոցեսում առաջանում է մեծ  
քանակությամբ «նախաստեղծ» ջուր:  
Հետևապես, առանց բացառության,  
ջուր հղել է բոլոր մոլորակների, այդ  
թվում և կուսնի վրա:


Հաշված է, որ ա-  
մեն մի մոլորակի կաղ-  
մավորման ընթաց-  
քում առաջանում է  
մակերեսի յուրաքան-  
չյուր քառակուսի կի-  
լոմետրին մինչև 2—3  
խորանարդ կիլոմետր  
հարաբերությամբ ջուր:  
Որոշ մոլորակների նը-  
կատմամբ այդ չրի  
հակատագիրը մեզ հա-  
մար անհայտ է: Ինչ  
վերաբերում է կուս-  
նին, ապա վերջինս

կարող է կորցրած լինել իր չուրը:  
Բայց եթե նկատի ունենանք կուսնի  
մակերեսի ջերմամեկուսիչ շերտի առ-  
կայությունը, որի մասին խոսում են  
աստրոֆիզիկուները, ապա երկրի  
բնական արբանյակը պետք է ունենա  
ջրի պաշար, իհարկե, սառցի ձեռվ,  
տեղադրված որոշ խորության վրա:  
Բացառված չէ, որ կուսնի վրա չուր կա-  
նակ հնդուկ վիճակում: Ուստի, ես  
կարծում եմ, որ կյանքի զարգացման  
համար հիմնական, հույժ կարևոր  
ու այմանը՝ ջրի առկայությունը, կուսնի  
վրա կա:

Ինձ թվում է, կուսնի վրա կարող են  
գոյություն ունենալ պարզ ազոտային  
և ածխածնային միացություններ՝ ամո-  
նիակ, ածխաջրածիններ, որոնք, գու-  
ցել ժամանակին կուսնի վրա ստեղծել  
են կյանքի առաջացման համար նը-  
պաստավոր պայմաններ: Եվ եթե  
կյանքի սկզբնավորման համար պայ-  
մանները կուսնի վրա նույնիսկ նվազ  
բարենպաստ են եղել, ապա չի կարե-  
լի հաշվի շառնել, որ կուսնին իր գոյ-  
ության միլիարդավոր տարիների ըն-  
թացքում կյանքը կարող էր փոխ առ-  
նել տիեզերական տարածություննե-  
րից՝ տիեզերական փոշու կամ խոշոր  
մետեորիտների միջոցով, որոնք մըթ-  
նոլորտի բացակայության շնորհիվ  
պահպանվել են կուսնի վրա ընկնե-  
լիս:

Ահա այն բոլոր խորհրդածություն-  
ները, որ կարելի է բերել մեր բնական  
արբանյակի վրա կյանքի հնարավո-  
րության մասին:

**Մ**արսը հասակով մեծ է երկրից,  
հավանաբար, միլիարդավոր տարինե-  
րիներով: Աշքի է զարնում այդ մոլորա-  
կի խիստ առանձնահատուկ արենոգրա-  
ֆիան: Մարսը միանգամայն ողորկ



տեսք ունի: Մեղանից ոչ մեկը չի հավատա, որ այն միշտ այդպիսին է եղել: Մարսի վրա եղել են և լեռներ, և՝ սարահարթեր: Լեռնակազմությունն այնտեղ, հավանորեն շատ վաղ է ավարտվել: Եղել են օվկիանոսներ, բայց հողմնահարության խիստ ուժեղ պրոցեսների հետևանքով (փոշու փոթորիկների դիտվել են վերջին դիմակայության ժամանակ) բռոր լեռնազանգվածները անցած միինարդավոր տարիների ընթացքում քայրայվել են, և նրանց մնացորդները հավասարապես ծածկել են մոլորակի մակերեսությը: Դրա համար էլ Մարսի վրա բացակայում են ջրային բաց տարածությունները: Բայց դա բոլորովին էլ չի խոսում այն մասին, որ Մարսի վրա չուր չկա: Հնարավոր է, որ այն գտնում է գետնի տակ, պինդ վիճակում:


Երկրորդ հարցը, որը մշտապես ծագում է, երբ խոսք է բացվում Մարսի մասին և, որը համախ դիտավորյալ կերպով աշբաթող է արվում, դա Մարսի «ջրանցքների» հարցն է: Մի կիսագնդից մյուսը ձգվող այդ կանոնավոր գոյացումների ծագումը չի կարելի բացատրել ինչ-որ բնական պատճառությունով: Դրանք բանական կամքի ստեղծագործություններ են: Եվ իսկապես, Մարսի բնական պայմանները նման են մեր անապատների պայմաններին, և, եթե Ալինեին «ջրանցքները», մենք կասեինք, որ բանական գործունեության հետքեր այդ մոլորակի վրա առհասարակ չկան: Սապրոֆիտային կյանքը, որն իր գոյության պահպանման համար պահանջում է որոշակի բանակության օրդանական նյութերի արտադրություն, անապատում իր գոյությունը կարող է պահպանել միմիայն ոռոգման զարգացած սիստեմի: Եվ, երբ մի մոլորակի վրա, որն իրենից

ներկայացնում է գրեթե համատարած անապատ, մենք տեսնում ենք ջրանցքների կանոնավոր սիստեմ, բնականաբար դալիս ենք այն եղրակացության, որ դրանք բանական արարածների կողմից ստեղծված կառուցներ են: Բայց, իհարկե, Մարսի «ջրանցքները» չպետք է պատկերացնել Կարա-կումում մեր անցկացրած ջրանցքների տեսքով: Մարսի «ջրանցքները» օազիսների մի շարան են, որոնք արհեստականորեն մատակարարվում են ջրով:

Աստղագետների կողմից հաստատված է, որ բևեռների ջրջանում սպիտակ թասակների հալման ժամանակ «ջրանցքները» ավելի պարզորոշ են երևում: Գորշացումն ընթանում է աստիճանաբար, սկսվելով հալման տեղից՝ գնում է դեպի հասարակածը և երանից ցած: Հետեապես, չի կարելի չհամաձայնել այն բանին, որ սպիտակ թասակները իրենցից ներկայացնում են ձյան ծածկույթ: Ընդ որում ձնհալը Մարսի վրա սկսվում է արեկի ճիշտ այն նույն բարձրության ժամանակ, ինչ և երկրի վրա: Ն. Ա. Կողիրեց ճշտորեն որոշել է ձյան առկայությունը մոլորակի վրա, բայց նրա հաստությունը իրը թե չի անցնում մի քանի միլիմետրից: Կարծում էմ, որ ձյան ծածկույթը մի քանի սանտիմետր է, գուցե և ավելի: Չէ որ ջրանցքների գորշացման համար երկու միլիմետր ձյունը, համենայն դեպք, բավական չէ:

Ես համոզված եմ, որ բևեռներում տեղացող ձյունը Մարսի համար խոշոր «տնտեսական» նշանակություն ունի: Հալոցի ջուրն այնտեղ օգտագործվում է որոշակի կարգով դասավորված անհամար օազիսները ոռոգելու համար:

Մոլորակի սակավ ջրային ռեսուրս-



ները այդշափ խելամտորեն օգտագործելու համար անհրաժեշտ է զիտակից աքարածների՝ մարսիցիների ներկայությունը...

Մի գիտողություն ևս Մարսի ֆիզիկական պայմանների, մասնավորապես մթնոլորտի մասին: Մարսի վրա մթնոլորտի առկայության վերաբերյալ դոյություն ունեցող տվյալները նիանդամայն հուսալի են: Բայց կասկած է հարուցում Մարսի մթնոլորտում ազոտի և թթվածնի բացակայության մասին պնդումը: Մարսի մթնոլորտում այդ գաղերի քանակությունը որոշելու համար արվող փորձերը կատարվում են Երկրի մթնոլորտի միջով, որտեղ վիթխարի քանակությամբ ազոտ և թթվածնի կա, և որտեղ դրանց քանակությունը փոփոխվում է Երկրի տարրեր կետերում: Մենք երբեք չենք գրտնի երկու տարրեր կետեր, որոնց վրա թթվածնի քանակությունը բացարձակապես նույնը լինի: Ուստի և Մարսի մթնոլորտում ազոտի ու թթվածնի քանակությունները որոշելիս թույլ տված է խալը կարող է շափազանց մեծ լինել: Իսկ առաջ ածխաթթու գաղ հայտնաբերվել է Մարսի մթնոլորտում, հայտնաբերվել է, որովհետև Մարսի մթնոլորտում այն ավելի շատ է, քան Երկրի վրա, և մեր մոլորակի մթնոլորտը չի խոչընդոտել գիտնականներին շափելու նրա քանակությունը:

Հետաքրքիր է Մարսի չերմատվության հարցը: Ընդունված է համարել, որ Մարսի մթնոլորտը տասն անգամ

նոսր լինելով Երկրի մթնոլորտից, թույլ է տալիս չերմության արագ փոխանցում տիեզերական տարածությանը: Բայց շպիտը է մոռանալ, որ Մարսի մթնոլորտը, շնորհիվ մոլորակի վրա ծանրության փորք ուժի, 2—3 անգամ ավելի հաստ շերտ ունի քան Երկրի մթնոլորտը: Իսկ չերմատվության արագությունը կախված է ոչ միայն գաղի քանակությունից, այլև գաղային պատյանի շափերից: Ուստի և Մարսի խավար կողմի չերմատիճանի մասին տվյալները զուտ հայեցողական բնույթ ունեն, դրանց չի կարելի հավատալ Իսկ Մարսի լուսավորված մասում, ինչպես հայտնի է, չերմատիճանը դրական է: Այդ իսկ պատճառով այնտեղ պայմաններն ախնքան է: Դաժան չեն, որքան վերագրում են Մարսին:

Մարսի կամ այլ մոլորակների վրա կյանքի առկայության մասին սովորաբար կարծիք են հայտնում աստղադիտները, ֆիզիկոսները, մաթեմատիկոսները, քիմիկոսները: Ես ոչ մի կենսարանի կարծիքի շեմ հանդիպել: Եվ դրանում չ' կայանում կարծիքների յուրահատկությունը: Բոլոր «ոչ կենսարանները» ձգտում են Մարսը և մյուս մոլորակները բնակեցնել Երկրային արարածներով, որոնք հարմարված են Երկրի վրա կյանքի ուրույն պայմաններին: Ընդ որում բոլորովին անտեսվում է Երկրային էակների հարմարվողականության աստիճանը: Մինչդեռ Երկրի վրա չկա մի խոռոչ, ուր կյանք չլինի: Եվ նավթի ու բնագինի մեջ, և ամենախոր օվկիանոսի հատակում, տաք աղբյուրներում, ուրանի հանքարում, ծծմբաթթվի լուծույթում, մեթանի կամ ամոնիակի մթնոլորտում՝ ամենուրեք կյանք կա: Եվ ինչո՞ւ արհեստականորեն սահմանա-

փակել մյուս մոլորակների պայմաննուրում կյանքի հարմարվողականության հնարավորությունը:

Աստղագետները Մարսը բնակեցնում են քարաքոսներով: Դա, նրանց կարծիքով, բռնական կյանքի դիմավոր և միակ ներկայացուցիչն է անապատացին մոլորակի վրա: Հարկ է հիշել, որ քարաքոսները երեան են եկել ներկրի վրա «կավճի» վերջում, երբ արդեն գոյություն ունեին ողնաշարավորները: Եվ դա հասկանալի է, քարաքոսները իրենցից ներկայացնելով սնկի և զրիմուի կոմպլեքս, շատ զգայուն օրգանիզմներ են և տանել չեն կարողանում նույնիսկ ամենանվազագույն քանակությամբ անսովոր գաղերի խառնուրդները մթնոլորտում: Նրանք ավելի զգայուն են, քան որևէ քիմիական ուսեակտիվ: Օրինակ, Մինուկի փողոցներում և զրոսայդիներում, ծառերի վրա դուք չեք գտնի քարաքոսներ, իսկ գյուղերում դրանք աճում են ուղղակի տանիքներին: Դա առաջին նշանն է այն բանի, որ քաղաքի մըթնոլորտը կենտուրված է արդյունաբերական ձեռնարկությունների գաղերով: Քիմիական անալիզը այնպես ճշտորեն չի որոշի օդի որակը, ինչպես քարաքոսը: Եվ այդպիսի նուրբ ու քմահաճ օրգանիզմներով աստղագետները բնակեցնում են... Մարսը:

Մարսի այն տեղերը, որոնք, ինչպես գտնում են, ծածկված են բռնականությամբ և ունեն կապտականաշգույն, բնակեցված են, իհարկե, ոչ թե քարաքոսներով, այլ ինչ-որ բարձր կարգի, հավանաբար, կուտուրական բույսերով: Հետևապես... պետք է խոսել մարսեցիների մասին, որոնք անեցնում են այդ բույսերը: Բռնական աշխարհը չի կարող քիչ թե շատ հարատեսել առանց սապրոֆիտների (բույսեր, որոնք ածխածինը վերցնում են

ոչ թե օդից, այլ պատրաստի օրդանական նյութերից: Սապրոֆիտների առավել հայտնի ներկայացուցիչները բակտերիաներն են ու սնկերը): Իսկ սապրոֆիտները մշտական ուղեկիցն են ավտոարտֆների՝ օրգանիզմներ, որոնք սնվում են անօրգանական նյութերով: Սա պարզապույն ճշմարտություն է:

Մարսն առաջացել է ներկրից մի քանի հարյուր միլիոն կամ միլիարդ տարի առաջ: Ես կարծում եմ, որ Մարսի բնական պայմանները թույլ են տվել, որ նրա վրա զարգանա բույսերի և կենդանիների բարդ կոմպլեքս, ներառյալ նաև բանական արարածները: Ընդ որում մարսեցիները, եթե միայն նրանք որևէ աղետի հետևանքով չեն կործանվել, գտնվում են մարդուն համաշավասար զարգացման էտապում: Ինչպես երեսում է, բավական երկար ժամանակ մարսեցիներն իրենց մոլորակի վրա կատարել են խոշոր վերափոխիչ աշխատանքներ: Այդպիսի աշխատանքները մարդկությունը դեռևս ի վիճակի չի եղել իրագործել: Ես նկատի ունեմ Մարսի ոռոգման սիստեմը:

Բնականաբար հարց է ծագում. իսկ չե՞ն այցելել արդյոք բանականության այդ եղբայրակիցները մեր երկիրը:

Ինձ թվում է, որ նրանք պետք է այցելած լինեն: Գիտնականների ճնշող մեծամատնությունը ժխտում է այդ, որովհետև նրանց այցելությունը մարդկության հիշողության մեջ ոչ մի հետք չի թողել: Իսկ ինչո՞ւ պետք է մնային այդ հետքերը: Հնարավոր է, որ նրանք մեզ մոտ «հյուր» են եղել մի քանի հազար տարի առաջ: Դիտել են, հետազոտել երկիրը և վճռել, որ



այստեղ անելիք շունեն, ով գիտե, գուցե նրանք հիմա՞ էլ այցելում են Երկիրը, բայց կոնտակտի մեջ չեն մըտնում մեզ հետ: Ինչո՞ւ ես, օրինակ, կասկածում եմ այն բանում, որ մարդու բանական զարգացման ներկա մակարդակը չկարողանա հասնել այնպիսի աստիճանի, որ մենք՝ ժամանակակից մարդիկս, այդ նոր մակարդակով ավելի բարձր կանգնած լինենք քան մեր նախահայրերը՝ քարանձավային բնակիչները:

Անք խոսեցինք կյանքի գոյության մասին տիեզերական տարածությունում և մոլորակների վրա: Իսկ ի՞նչ կարող է տալ կենդանի մատերիայի այդ ոչ երկրային ձևերի իմացությունը «երկրային» գիտությանը:

Ամենից առաջ գիտնականները կարող են կատարել խոշոր տեսական ընդհանրացումներ: Տիեզերքում կյանքի առկայության հետազոտությունները պետք է հաստատեն Դարվինի տեսությունը, ապացուցեն, որ այն համընդհանուր նշանակություն ունի տիեզերքի համար: Ինձ թվում է, Դարվինի գաղափարները չեն սահմանափակվում Երկրով, նրանք ընդդրկում են նաև ողջ աստղակենսաբանությունը: Իսկ այդ բանը թույլ կտա նախիմանալ (պրոգնոզել) կյանքը և, օգտվելով Դարվինի ուսմունքից, կանխադուշակել տիեզերքի տարածություններում դեգերող յուրաքանչյուր մոլորակի վրա գոյություն ունեցող կյանքի ձևերը:

Երկրային կենսաբանությունը կհարսաւանա աստղակենսաբանության դրույթներով, որոնք կարող են նոր ուղիներ բացել մեր կենդանի բնությունը և ընդհանրապես Երկիրը վերափոխելու համար: Պրոբլեմներ կծագեն տիեզերքի հետազոտությունների արդյունքները պրակտիկ կերպով օգտագործելու վերաբերյալ:

Մենք կարող ենք տիեզերքից փոխառնել տարրեր օրգանիզմներ, որոնք չկան երկրի վրա: Բայց շպետք է մոռանալ, որ այլ մոլորակների, մասնավորապես Մարսի վրա (և նույնիսկ նույնի վրա), կարող են գոյություն ունենալ պարզունակ կամ բարձր զարգացած բույսերի ու կենդանիների բավականին ազդեսիլ ձևեր, որոնք Երկիրը բերվելով կարող են աղետ առաջանել:

Ներկայումս դեպի Երկիր եկող ճանապարհին կա մի պատնեշ, որը ախտազերծում է տիեզերական տարածություններից եկող ամեն ինչ: Դա մըթնողորտն է: Տիեզերական արագությամբ նրա շերտերը մտնող յուրաքանչյուր մարմնի ուժեղ տարացմամբ նա սպանում է ամեն մի կենդանություն: Եվ եթե նույնիսկ կյանքի առանձին սաղմեր հասնում են Երկրի մակերեսին, ապա նրանք «ուժասպառ» են լինում և, իբրև կանոն, գործնականում զարդանալ չեն կարող: Բայց տիեզերանավերը «պատուհան» են բացել պաշտպանական վահանի միջով, և նրանք, իհարկե, կարող են իրենց հետ ներմուծել մեզ համար վտանգավոր էակներ: Պետք է խուսափել այլ մոլորակներից վնասակար օրգանիզմներ բերելուց, և աշխատել բերել օգտակարները: Ուստի բոլոր, նույնիսկ դեպի կուսին, ճանապարհորդություններին, պետք է մասնակցի կենսաբան, հատկապես կենսաբան, որովհետեւ միայն նա է ի վիճակի որոշելու և բանիմացորեն մեկնաբանելու տիեզերքում կյանքի առկայության հետ կապված երևութները:

Ես կարծում եմ, որ մոտակա տարիներին մասնագետ աստղակենսաբաններին մեծ աշխատանք է սպավում արեգակնային համակարգության մեջ: